Լրամշակված նախագիծ

Երկրորդ ընթերցում

Կ-648[1]-12.06.2020-ՊԻ-011

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
Օ Ր Ե Ն Ք Ը
«ՎԱՐՉԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՀԻՄՈՒՆՔՆԵՐԻ ԵՎ ՎԱՐՉԱԿԱՆ ՎԱՐՈՒՅԹԻ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» 2004 թվականի փետրվարի 18-ի ՀՕ-41-Ն օրենքի 74-րդ հոդվածի 1-ին մասում լրացնել նոր «դ» կետ.

«դ) այն դեպքերի, երբ **վարչական ակտի հասցեատեր չհանդիսացող անձի կողմից** բողոքարկվում է **վարչական ակտի հասցեատիրոջ համար բարենպաստ վարչական ակտ (ներառյալ՝ զուգորդվող վարչական ակտի դեպքում հասցեատիրոջ համար բարենպաստ դրույթները):»:**

Հոդված 2. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

Օ Ր Ե Ն Ք Ը

«ՎԱՐՉԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՀԻՄՈՒՆՔՆԵՐԻ ԵՎ ՎԱՐՉԱԿԱՆ ՎԱՐՈՒՅԹԻ ՄԱՍԻՆ»

ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» 2004 թվականի փետրվարի 18-ի ՀՕ-41-Ն օրենքի ~~(այսուհետ՝ Օրենք)~~ 74-րդ հոդվածի 1-ին մասումը լրացնել ~~հետևյալ բովանդակությամբ~~նոր «դ» կետով.

«դ) այն դեպքերի, երբ **վարչական ակտի հասցեատեր չհանդիսացող անձի կողմից** բողոքարկվում է **վարչական ակտի հասցեատիրոջ համար բարենպաստ վարչական ակտ (ներառյալ՝ զուգորդվող վարչական ակտի դեպքում հասցեատիրոջ համար բարենպաստ դրույթները)**:~~՝ վարչական ակտն ամբողջությամբ կամ մասնակիորեն վերացնելու պահանջով~~»:

Հոդված 2. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվանից հաջորդող տասներորդ օրը:

ԱՄՓՈՓԱԹԵՐԹ

ՀՀ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎՈՒՄ ԱՌԱՋԻՆ ԸՆԹԵՐՑՄԱՄԲ ԸՆԴՈՒՆՎԱԾ «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՐՉԱԿԱՆ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՎ «ՎԱՐՉԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՀԻՄՈՒՆՔՆԵՐԻ ԵՎ ՎԱՐՉԱԿԱՆ ՎԱՐՈՒՅԹԻ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՆԵՐԻ ՆԱԽԱԳԾԵՐԻ (Կ-648-12.06.2020-ՊԻ-011/1) ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՆԵՐԿԱՅԱՑՎԱԾ ԱՌԱՋԱՐԿՆԵՐԻ

№	Առաջարկության (փոփոխության, լրացման) հեղինակը	Հոդվածը, կետը, որին վերաբերում է առաջարկությունը	Առաջարկություն (փոփոխություն, լրացում)	Առաջարկության վերաբերյալ հեղինակի (հիմնական զեկուցողի) եզրակացությունը	Առաջարկություններն ընդունելու կամ մերժելու վերաբերյալ հանձնաժողովի որոշումը
1.	Կառավարություն	**«Վարչական դատավարության օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին»** օրենքի նախագծի (այսուհետ՝ Նախագիծ) 1-ին	Նախագծի 1-ին հոդվածում «դեկտեմբերի 5-ի» բառերից հետո լրացնել «ՀՕ-139-Ն» բառերը:	Ընդունվել է: Նախագծում կատարվել են համապատասխան փոփոխություններ:	Ընդունվել է:

		հոդված			
2.	Կառավարություն	**«Վարչական դատավարության օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին»** օրենքի նախագծի 1-ին հոդվածի 1-ին կետ	Նախագծի 1-ին հոդվածի 1-ին կետում «լրացնել» բառից հետո լրացնել «նոր» բառը, իսկ «այդ վարչական ակտը ամբողջությամբ կամ մասնակիորեն վերացնելու պահանջով» բառերը հանել:	Ընդունվել է: Նախագծում կատարվել են համապատասխան փոփոխություններ:	Ընդունվել է:
3.	Կառավարություն	**«Վարչական դատավարության օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին»** օրենքի նախագծի 2-րդ հոդվածի 1-ին մաս	Նախագծի 2-րդ հոդվածի 1-ին մասը շարադրել հետևյալ խմբագրությամբ. «Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:»:	Ընդունվել է: Նախագծում կատարվել են համապատասխան փոփոխություններ:	Ընդունվել է:
4.	Կառավարություն	**«Վարչական դատավարության օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին»** օրենքի նախագծի 2-րդ հոդվածի 2-րդ մաս	Նախագծի 2-րդ հոդվածի 2-րդ մասը շարադրել հետևյալ խմբագրությամբ. 1. «Մինչև սույն օրենքն ուժի մեջ մտնելը գործող խմբագրությամբ Օրենսգրքի 83-րդ հոդվածի 1-ին մասի հիմքով վարչական ակտի հասցեատեր չհանդիսացող անձի կողմից վարչական ակտի հասցեատիրոջ համար բարենպաստ վարչական ակտն (ներառյալ՝	Ընդունվել է: Նախագծում կատարվել են համապատասխան փոփոխություններ:	Ընդունվել է:

			զուգորդվող վարչական ակտի դեպքում հասցեատիրոջ համար բարենպաստ դրույթները) ամբողջությամբ կամ մասնակիորեն վերացնելու (վիճարկելու) պահանջով ներկայացված վիճարկման հայցերի հիման վրա համապատասխան վարչական ակտերի կատարման կասեցումները սույն օրենքն ուժի մեջ մտնելու պահից համարվում են վերացած՝ բացառությամբ սույն օրենքն ուժի մեջ մտնելու պահին ավարտված գործերով դատական ակտերի բողոքարկման և վերաքննության կամ վճռաբեկության կարգով նման գործերի քննության դեպքերի:»:»:		
5.	Կառավարություն	**«Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքում լրացում կատարելու մասին»** օրենքի նախագծի (այսուհետ՝ Նախագիծ) 1-ին հոդված	Նախագծի 1-ին հոդվածը շարադրել հետևյալ խմբագրությամբ. «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» 2004 թվականի փետրվարի 18-ի ՀՕ-41-Ն օրենքի 74-րդ հոդվածի 1-ին մասում լրացնել նոր «դ» կետ. «դ) այն դեպքերի, երբ վարչական ակտի հասցեատեր չհանդիսացող անձի կողմից բողոքարկվում է	Ընդունվել է: Նախագծում կատարվել են համապատասխան փոփոխություններ:	Ընդունվել է:

			վարչական ակտի հասցեատիրոջ համար բարենպաստ վարչական ակտ (ներառյալ՝ զուգորդվող վարչական ակտի դեպքում հասցեատիրոջ համար բարենպաստ դրույթները):»:		
6.	Կառավարություն	**«Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքում լրացում կատարելու մասին»** օրենքի նախագծի 2-րդ հոդված	Նախագծի 2-րդ հոդվածը շարադրել հետևյալ խմբագրությամբ. «Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:»:	Ընդունվել է: Նախագծում կատարվել են համապատասխան փոփոխություններ:	Ընդունվել է: